# ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 16.04.2013թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳԲԽ-20/13 բողոքը քննող հանձնաժողովի

ԳԲԽ-20/13 բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով գնումների բողոքարկման խորհրդի անունից, քննելով «Ագաթ-777» ՍՊԸ-ի կողմից 27.03.2013թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը, ինչպես նաև ուսումնասիրելով ԳԲԽ-20/13 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված եզրակացությունը պարզեց.

**1. <u>«Ագաթ-777» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքով «Ագաթ-777» ՍՊԸ-ն հայտնել է, որ 18.03.2013թ. մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՍԲԱՇՁԲ-10/25» ծածկագրով սահմանափակ ընթացակարգի նախաորակավորման ընթացակարգին:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՍԲԱՇՁԲ-10/25» ծածկագրով սահմանափակ ընթացակարգի նախաորակավորման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.03.2013թ. ժամը 11:00-ին կայացած նիստի արձանագրության 1.4 կետի բ) ենթակետով գնահատող հանձնաժողովը «Ագաթ»-777 ՍՊԸ-ի հայտը գնահատել է անբավարար և մերժել է հետևյալ հիմքով.

«Թերի է լրացվել ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-ն որոշման 90-րդ կետի 1-ին ենթակետի բ) մասի՝ մասնակիցը պետք է բավարարի օրենքի 3-րդ մասի 1-ին կետով սահմանված պահանջները, այն է՝ անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ կառավարության

0.02.2011թ. N 168-ն որոշման 80-րդ կետով պահանջվող տեղեկությունը, որը գնահատվում է 80-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներով»:

«Ագաթ-777» ՍՊԸ-ն գտնում է, որ գնահատող հանձնաժողովի «Ագաթ-777» ՍՊԸ-ի հայտի անբավարար գնահատումը և մերժումը հակասում է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին հետևյալ հիմնավորումներով.

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (այսուհետ՝ Կարգ) 90-րդ կետի համաձայն՝ նախաորակավորման ընթացակարգը կազմակերպվում է օրենքի 21-րդ հոդվածով և դրանց կիրառման հետևյալ կարգով՝

1) նախաորակավորման հայտարարությամբ սահմանվում են մասնակցի մասնակցության իրավունքին և որակավորմանը ներկայացվող հետևյալ պահանջները՝

ա) մասնակիցը պետք է բավարարի օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված մասնակցության իրավունքի պահանջներին,

բ) մասնակիցը պետք է բավարարի օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով սահմանված պահանջները:

Կարգի 90-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է նախաորակավորման հայտարարությամբ սահմանված կարգով: Նախաորակավորման հայտը ներառում է մասնակցի կողմից հաստատված՝ նախաորակավորման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում և մասնակցի կողմից հաստատված գրավոր հայտարարություն՝ նախաորակավորման հայտարարությամբ սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների մասով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին՝ հայտարարությանը կցելով նույն կարգի համաձայն պահանջվող տեղեկությունները:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՍԲԱՇՁԲ-10/25» ծածկագրով սահմանափակ ընթացակարգի նախաորակավորման ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ մասնակցության իրավունքը և որակավորումը հավաստելու համար անհրաժեշտ է ներկայացնել հայտարարություն, որի առաջարկվող ձևը և դրա նկատմամբ առաջարկվող պահանջները ներկայացված են N 2 հավելվածում, մասնակցության դիմում N 1 հավելված, և հայտարարություն՝ պայմանագրով նախատեսված գործունեությանը մասնակցի՝ մասնագիտական գործունեության համապատասխանության վերաբերյալ N 3 հավելված:

Նախաորակավորման հրավերով սահմանված հավելված 3-ով պահանջվել է ներկայացնել մասնակցի կողմից նախկինում կատարված պայմանագրերի առարկաների,

ավալի՝ գումարային արտահայտությամբ և պատվիրատուի և նրա հետ կապ հաստատելու մասին տեղեկատվություն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Կարգի 75-րդ կետի համաձայն՝ որակավորումը հիմնավորող փաստաթղթերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից անհամապատասխանություն արձանագրվելու (հայտնաբերվելու) դեպքում՝ գնումները համակարգողը երեք աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1. շտկվելու դեպքում մասնակցի հայտը գնահատվում է բավարար,
2. չշտկվելու դեպքում, գնահատող հանձնաժողովի որոշմամբ, տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

«Ագաթ-777» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում ներառված հավելված 3-ում նշվել է նախկինում կատարած պայմանագրերի առարկաների, ծավալների՝ գումարային արտահայտությամբ և պատվիրատուների վերաբերյալ տեղեկատվությունը, իսկ պատվիրատուների հետ կապ հաստատելու մասին տվյալները «Ագաթ-777» ՍՊԸ-ի կողմից թյուրիմացաբար չի նշվել:

Այսինքն, գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով Կարգի 75-րդ կետով սահմանված պահանջները, պետք է «Ագաթ-777» ՍՊԸ-ին հնարավորություն ընձեռեր տեղ գտած անհամապատասխանությունը վերացնելու համար, ինչը գնահատող հանձնաժողովի կողմից չի իրականացվել:

«Ագաթ-777» ՍՊԸ-ն գտնում է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՍԲԱՇՁԲ-10/25» ծածկագրով սահմանափակ ընթացակարգի նախաորակավորման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով և Կարգի 75-րդ կետով սահմանված պահանջները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ «Ագաթ-777» ՍՊԸ-ն գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է դադարեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՍԲԱՇՁԲ-10/25» ծածկագրով սահմանափակ ընթացակարգի նախաորակավորման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.03.2013թ. ժամը 11:00-ին կայացած նիստի արձանագրության 1.4 կետի

բ) ենթակետով՝ «Ագաթ-777» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու մասին ընդունած որոշումը:

**2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները.**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 04.04.2013թ. N 04/032-538 գրությամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը՝ խնդրելով տալ կարծիք «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 27.03.2013թ. «Ագաթ-777» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ:

ՀՀ պաշտպանության նախարարությունը «Ագաթ-777» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին կարծիք չի հայտնել:

**3. ԳԲԽ-20/13 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը.**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը հանձնաժողովին ներկայացրել է իր եզրակացությունը և առաջարկել է «Ագաթ-777» ՍՊԸ-ի կողմից 27.03.2013թ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը բավարարել՝ դադարեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՍԲԱՇՁԲ-10/25» ծածկագրով սահմանափակ ընթացակարգի նախաորակավորման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.03.2013թ. ժամը 11:00-ին կայացած նիստի արձանագրության 1.4 կետի բ) ենթակետով՝ «Ագաթ-777» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու մասին ընդունված որոշումը:

**4. ԳԲԽ-20/13 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը, ԳԲԽ-20/13 բողոքը քննող հանձնաժողովի հիմնավորումները և եզրահանգումները.**

Հանձնաժողովն ուսումնասիրել է «Ագաթ-777» ՍՊԸ-ի (այսուհետև՝ նաև Ընկերություն) կողմից 27.03.2013թ. ներկայացված բողոքը, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՍԲԱՇՁԲ-10/25» ծածկագրով սահմանափակ ընթացակարգի նախաորակավորման հայտարարությունը, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՍԲԱՇՁԲ-10/25» ծածկագրով սահմանափակ ընթացակարգի նախաորակավորման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետև՝ նաև Հանձնաժողով) 18.03.2013թ.

ժամը 11:00-ին կայացած նիստի արձանագրությունը և «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի եզրակացությունը:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ զինված ուժերի կարիքների համար անհրաժեշտ մասնաշենքի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՍԲԱՇՁԲ-10/25» ծածկագրով սահմանափակ ընթացակարգի նախաորակավորման ընթացակարգ (այսուհետև՝ նաև Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով ի թիվս այլ կազմակերպությունների հայտ է ներկայացրել նաև «Ագաթ-777» ՍՊԸ-ն:

Հանձնաժողովի 18.03.2013թ. ժամը 11:00-ին կայացած նիստի արձանագրության 1.4 կետի բ) ենթակետով որոշում է կայացվել «Ագաթ-777» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել այն, քանի որ թերի է լրացվել ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-ն որոշման 90-րդ կետի 1-ին ենթակետի բ) պարբերությունը՝ մասնակիցը պետք է բավարարի օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով սահմանված պահանջները, այն է՝ անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-ն որոշման 80-րդ կետով պահանջվող տեղեկությունը, որը գնահատվում է 80-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներով:

«Ագաթ-777» ՍՊԸ-ն Կենտրոնին ներկայացրած բողոքով հայտնել է, որ վերջինիս կողմից ներկայացված հայտում ներառված N 3 հավելվածում նշվել է նախկինում կատարված պայմանագրերի առարկաների, ծավալների՝ գումարային արտահայտությամբ և պատվիրատուների վերաբերյալ տեղեկատվությունը, իսկ պատվիրատուների հետ կապ հաստատելու մասին տվյալները «Ագաթ-777» ՍՊԸ-ի կողմից թյուրիմացաբար չեն նշվել և գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով Կարգի 75-րդ կետով սահմանված պահանջները, պետք է «Ագաթ-777» ՍՊԸ-ին հնարավորություն ընձեռեր տեղ գտած անհամապատասխանությունը վերացնելու համար, ինչը գնահատող հանձնաժողովի կողմից չի իրականացվել:

«Ագաթ-777» ՍՊԸ-ն նշել է նաև, որ գտնում է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՍԲԱՇՁԲ-10/25» ծածկագրով սահմանափակ ընթացակարգի նախաորակավորման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 75-րդ կետով սահմանված պահանջները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ նաև Օրենք) 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սահմանափակ ընթացակարգի կիրառման դեպքում կազմակերպվում է նախաորակավորման ընթացակարգ:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 90-րդ կետի (այսուհետև՝ նաև Կարգ)՝

- 1-ին ենթակետի բ. պարբերության համաձայն՝ նախաորակավորման հայտարարությամբ սահմանվում է մասնակցի մասնակցության իրավունքին և որակավորմանը ներկայացվող հետևյալ պահանջը՝ մասնակիցը պետք է բավարարի Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով սահմանված պահանջները:
- 2-րդ ենթակետի բ. պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է նախաորակավորման հայտարարությամբ սահմանված կարգով: Նախաորակավորման հայտը ներառում է մասնակցի կողմից հաստատված՝ գրավոր հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների մասով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին՝ հայտարարությանը կցելով նույն կարգի համաձայն պահանջվող տեղեկությունները:

Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝ մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը:

Կարգի 80-րդ կետի համաձայն՝ Մասնակիցների՝ Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված՝ «Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1. Մասնակիցը հայտով ներկայացնում է նախկինում կատարված պայմանագրերի առարկայի, ծավալի՝ գումարային արտահայտությամբ (ՀՀ դրամ), պատվիրատուի և նրա հետ կապ հաստատելու տվյալների վերաբերյալ տեղեկությունները:

2. Մասնակիցը համարվում է Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի պահանջին բավարարող, եթե հայտով ներկայացնում է պահանջվող տեղեկությունները և հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում վերջինս պատշաճ ձևով իրականացրել է գնման առարկա հանդիսացող կամ համանման ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման գործարքներ՝ նախկինում կատարված պայմանագրեր:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՍԲԱՇՁԲ-10/25» ծածկագրով սահմանափակ ընթացակարգի նախաորակավորման ընթացակարգի հայտարարության 3-րդ կետի՝

- գ) ենթակետով սահմանվել է, որ նախաորակավորման ընթացակարգին մասնակցելու համար Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը:
- դ) ենթակետով սահմանվել է, որ անհրաժեշտ է ներկայացնել հայտարարություն՝ պայմանագրով նախատեսված գործունեությանը մասնակցի՝ մասնագիտական գործունեության համապատասխանության վերաբերյալ (N 3 հավելված):

Նախաորակավորման ընթացակարգի հայտարարության անբաժանելի մասը կազմող N 3 հավելվածով պահանջվել է ներկայացնել մասնակցի կողմից նախկինում կատարած պայմանագրերի առարկաների, ծավալի՝ գումարային արտահայտությամբ և պատվիրատուի և նրա հետ կապ հաստատելու մասին տեղեկատվություն:

Կարգի 75-րդ կետի (ՀՀ կառավարության 20.09.2012թ. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ 1259-Ն որոշման խմբագրությամբ) համաձայն՝ որակավորումը հիմնավորող փաստաթղթերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից անհամապատասխանություն արձանագրվելու (հայտնաբերվելու) դեպքում՝ գնումների համակարգողը երեք աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1. շտկվելու դեպքում մասնակցի հայտը գնահատվում է բավարար,
2. չշտկվելու դեպքում, գնահատող հանձնաժողովի որոշմամբ, տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Այսինքն, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՍԲԱՇՁԲ-10/25» ծածկագրով սահմանափակ ընթացակարգի գնահատող հանձնաժողովը բողոքաբեր ընկերությանը նշված հայտարարության մեջ տեղ գտած անհամապատասպանությունը շտկելու հնարավորություն չընձեռելով, խախտել է Կարգի 75-րդ կետով սահմանված պահանջները, քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին ենթակետով, Կարգի 90-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի բ. պարբերություններով և «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՍԲԱՇՁԲ-10/25» ծածկագրով սահմանափակ ընթացակարգի նախաորակավորման ընթացակարգի

հայտարարության 3-րդ կետի գ) և դ) ենթակետերով սահմանված են ընթացակարգի մասնակցի «պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» որակավորման չափանիշի նկատմամբ ներկայացվող պահանջները:

Գնումների բողոքարկման խորհուրդը գտնում է, որ «Ագաթ 777» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Վերոգրյալի հիման վրա և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետը գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Ագաթ 777» ՍՊԸ-ի կողմից 27.03.2013թ. Կենտրոնին ներկայացված բողոքը բավարարել:

2. Դադարեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՍԲԱՇՁԲ-10/25» ծածկագրով սահմանափակ ընթացակարգի նախարակավորման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.03.2013թ. ժամը 11:00-ին կայացած նիստի արձանագրության 1.4 կետի բ) ենթակետով՝ «Ագաթ-777» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու մասին ընդունված որոշումը:

Գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

Գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողովի՝

Նախագահ՝ Գայանե Գասպարյան

Անդամներ՝ Ավագ Ավագյան

Վարազդատ Մկրտչյան